ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.06.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2022/260

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ
Մասնակից՝ «Պրո-Մեդ Պլուս» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/12» ծածկագրով գնման ընթացակարգ, բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/12-9»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 31.05.2022թ.-ի թիվ 26/26-1/9976-2022 գրությամբ «Պրո-Մեդ Պլուս» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 26.05.2022թ. թիվ 08-138 գրության հիման վրա, 31.05.2022թ.-ին «Պրո-Մեդ Պլուս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 31.05.2022թ.-ին:

31.05.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2022/260 համարի ծածկագիրը:

03.06.2022թ.-ին, 10.06.2022թ.-ին և 24.06.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 10.06.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 24.06.2022թ.-ին:

2. **<u>«Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>**

«Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն 26.05.2022թ. թիվ 08-138 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնելով հետևյալը.

««Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «Պրո-Մեդ Պլուս» ՍՊԸ-ին ներառելու նպատակով Ձեզ ենք տրամադրում հետևյալ տեղեկությունները.

«Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Պրո-Մեդ Պլուս» ՍՊԸ-ի միջև 10.01.2022թ կնքվել է ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/12-9 ծածկագրով պայմանագիրը:

Նշված պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պայմանների կիրառմամբ հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում: Համաձայն ՀՀ գնումների մասին օրենսդրության պահանջների, ինչպես նաև Պայմանագրի

8.15 կետի պայմանների «Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:»

Ֆինանսական միջոցների հատկացման և վճարման պայմանի վերաբերյալ համաձայնագիր կնքելու ծանուցումը Ընկերությանը ներկայացվել է 26.04.2022թ-ին, ուստի նա կրում էր պարտավորություն մինչև 18.05.2022թ. ներառյալ Պատվիրատուին ներկայացնել կնքված համաձայնագիրը: Ընկերությունը համաձայնագիրը այդպես էլ չի կնքել և չի ներկայացրել Պատվիրատուին, հետևաբար պայմանագիրը ենթակա է միակողմանի լուծման:

Միաժամանակ, Պատվիրատուի պատվերների համաձայն, մինչև պայմանագիրը լուծելու գործընթաց նախաձեռնվելը, Ընկերության կողմից իրականցվել են որոշ մատակարարումներ պայմանագրի շրջանակներում, որոնք ընդունվել են Պատվիրատուի կողմից՝ անհրաժեշտությունից ելնելով, ուստի այդ մասով Պայմանագիրը համարվում է փաստացի կատարված Վաճառողի կողմից: Արդյունքում 25.05.2022թ-ին վերոնշյալ պայմանագիրը բժշկական կենտրոնի կողմից միակողմանի մասնակի լուծվել է՝ չմատակարարված ապրանքների մասով (Հրապարակվել է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 25.05.2022թ. և ի լրումն 26.05.2022թ-ին):

Կից ներկայացնում ենք կնքված պայմանագիր, դրա միակողմանի լուծելու մասին ծանուցման, ծանուցված համաձայնագրի նախագծի, էլ. փոստից քաղվածքի պատճենները:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/12» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Պրո-Մեդ Պլուս» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Պրո-Մեդ Պլուս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 31.05.2022թ.-ին գրությամբ դիմել է «Պրո-Մեդ Պլուս» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 31.05.2022թ.-ի թիվ 26/26-1/9976-2022 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Մասնակիցը, 16.06.2022թ.-ին ներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում, հայտնել է հետևյալը.

««Պրո-Մեդ Պլուս» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2022/260 ընթացակարգի հիմքերի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ նկատառումները.

«Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ի և «Պրո-Մեդ Պլուս» ՍՊԸ-ի միջև 10.01.2022թ. կնքվել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/12-9» ծածկագրով պայմանագիր /այսուհետ նաև՝ Պայմանագիր/:

Պատվիրատուն 26.04.2022թ. համաձայնագիր կնքելու մասին ծանուցումը ուղարկվել է Մասնակցի համապատասխան էլեկտրոնային փոստի հասցեին:

«Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ի և «Պրո-Մեդ Պլուս» ՍՊԸ-ի միջև թիվ «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/12-9» ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 1 Համաձայնագիր չի կնքվել:

www.procurement.am համացանցային կայքում՝ <պայմանգրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ> բաժնում, 25.05.2022թ. և ի լրումն 26.05.2022թ. հրապարակված է պայմանգրի միակողմանի լուծման մասին գրությունները:

25.05.2022թ. թիվ 08-132 գրությամբ նշվել է հետևյալը.

««Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ի և «Պրո-Մեդ Պլուս» ՍՊԸ-ի միջև 10.01.2022թ. կնքվել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/12-9» ծածկագրով պայմանագիրը:Նշվածպայմանագիրը կնքվել է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պայմանների կիրառմամբ հայտարարված գնման ընթացակարգերի շրջանակներում: Համաձայն ՀՀ գնումների մասին օրենսդրության պահանջների, ինչպես նաև պայմանագրի 8.15 կետի պայմանների <Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև

համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն հնախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում է, և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

Ֆինանսական միջոցների հատկացման և վճարման պայմանի վերաբերյալ համաձայնագիր կնքելու ծանուցումը նշված պայմանգրի մասով Ձեզ ներկայացվել են 26.04.2022թ., ուստի Դուք կրում էիք պարտավորություն մինչև 18.05.2022թ. ներառյալ Պատվիրատուին ներկայացնել կնքված համաձայնագիրը, ինչը չեք կատարել:

Միաժամանակ մինչև համաձայնագրի կնքվելը Ձեր կողմից իրականացվել են որոշ մատակարարումներ պայմանագրի շրջանակներում, որոնք ընդունվել են Պատվիրատուի կողմից՝ անհրաժեշտությունից ելնելով, ուստի Պատվիրատուն համարում է այդ մասով Պայմանագիրը Ձեր կողմից փաստացի կատարած:

Հիմք ընդունելով վերոգրյալները նշված պայմանգիր միակողմանիորեն լուծվում է Պատվիրատուի կողմից պայմանգրի չկատարված մասով՝ 4137281.2 ՀՀ դրամի չափով, որի հաշվարկը ներկայացվում է ստորև՝ աղյուսակի տեսքով:

Տեղեկացնում ենք, որ ՀՀ գնումների մասին օրենսդրության պահանջներին համաձայն Ձեր ընկերությունից կգանձվի պայմանգրի որակավորման ապահովումները պայմանգրի լուծված նմասերին համապատասխան:

Միաժամանակ, տեղեկացնում ենք, որ Վաճառողը համարվում է Պայմանգիրը մակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված սույն ծանուցումը Գնորդի կողմից տեղեկագրում հրապարակելու հաջորդ օրվանից:»:

Ելնելով վերոգրյալներից՝ Մասնակցիը Բողոքներ քննող անձին խնդրել է «Պրո-Մեդ Պլուս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնած ընթացակարգը մերժել:

4. <u>ՍՑ-LO-2022/260 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Պրո-Մեդ Պլուս» ՍՊԸ-ի միջև 10.01.2022թ.-ին կնքվել է թիվ «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/12-9» ծածկագրով պետական գնման պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

iii. Պայմանագրի հավելված 2-ով սահմանված վճարման ժամանակացույց համաձայն՝ ֆինանսական միջոցները նախատեսված չեն: Սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ:

iv. Պայմանագրի 8.15 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված բժշկական նշանակության ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

v. Պատվիրատուն 26.04.2022թ.-ին Մասնակցին է ներկայացել Պայմանագրի համաձայնագրի օրինակը:

vi. Կողմերի միջև համաձայնագիր չի կնքվել:

vii. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 25.05.2022թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ 08-132 ծանուցման համաձայն՝ «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Պրո-Մեդ Պլուս» ՍՊԸ-ի միջև 11.01.2022թ.-ի թիվ ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/12-9 պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պայմանների կիրառմամբ հայտարարված գնման ընթացակարգերի

շրջանակներում: Համաձայն ՀՀ գնումների մասին օրենսդրության պահանջների, ինչպես նաև Պայմանագրի 8.15 կետի պայմանների «Պայմանագրով նախատեսված բժշկական նշանակության ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:»:

Ֆինանսական միջոցների հատկացման և վճարման պայմանի վերաբերյալ համաձայնագիր կնքելու ծանուցումները համապատասխան Պայմանագրի մասով Մասնակցին ներկայացվել են 26.04.2022թ-ին, ուստի վերջինս կրում էր պարտավորություն մինչև 18.05.2022թ. ներառյալ Պատվիրատուին ներկայացնել կնքված համաձայնագիրը, ինչը չի կատարվել:

Միաժամանակ, մինչև համաձայնագիր կնքվելը Մասնակցի կողմից իրականցվել են որոշ մատակարարումներ Պայմանագրի շրջանակներում, որոնք ընդունվել են Պատվիրատուի կողմից՝ անհրաժեշտությունից ելնելով, ուստի Պատվիրատուն համարում է այդ մասերով Պայմանագրերը Ընկերության կողմից փաստացի կատարված:

Հիմք ընդունել վերոգրյալները՝ Պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է Պատվիրատուի կողմից Պայմանագրի չկատարված մասով՝ 4 137 281.2 ՀՀ դրամի չափով:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 31.05.2022թ.-ի թիվ 26/26-1/9976-2022 գրությամբ «Պրո-Մեդ Պլուս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, բժշկական նշանակության ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի հավելված 2-ով սահմանված վճարման ժամանակացույց համաձայն՝ ֆինանսական միջոցները նախատեսված չեն: Սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ:

Պայմանագրի 8.15 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված բժշկական նշանակության ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը

ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

Վերոնշյալ նորմերի համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Պրո-Մեդ Պլուս» ՍՊԸ-ի միջև կնքված պետական գնման Պայմանագրի հավելված 2-ով սահմանվել է, որ ֆինանսական միջոցները նախատեսված չեն, իսկ ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ: Պատվիրատուն 26.04.2022թ.-ին Մասնակցին է ներկայացել Պայմանագրի համաձայնագրի օրինակը, սակայն կողմերի միջև համաձայնագիր չի կնքվել՝ Մասնակցի կողմից համաձայնագիր չներկայացնելու հանգամանքով պայմանավորված:

www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 25.05.2022թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ 08-132 ծանուցմամբ՝ Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի 8.15 կետը, միակողմանի լուծել է Պայմանագիրը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Նշված իրավանորմերի վերլուծության հիման վրա՝ Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր

մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Պրո-Մեդ Պլուս» ՍՊԸ-ն, չկնքելով և Պատվիրատուին չներկայացնելով համաձայնագիրը, խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած՝ համաձայնագիր կնքելու և ներկայացնելու պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ինչ վերաբերում է Մասնակից կողմից դիրքորոշմամբ ներկայացված փաստական ու իրավական հիմքերին, հանգամանքներին, ապա Բողոքներ քննող անձը գտնում է, որ դրանք առարկայազուրկ են, քանի որ իրականացված մատակարարումների փաստն ինքն իրենով չի կարող հերքել կամ մեղմել Մասնակցի՝ կնքված պայմանագրով ստանձնած համաձայնագիր կնքելու և ներկայացնելու պարտավորության խախտման փաստը:

Ավելին, ապրանքների մատակարարումներ իրականացնելն ու համաձայնագիր չկնքելը, գնահատելով դիրքորոշմամբ ներկայացված փաստական ու իրավական հանգամանքների համատեքստում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ դրանց միջև առկա չէ որևէ պատճառահետևանքային կապ, առ այն, որ մատակարարումներ իրականացնելն ուղղակիորեն հանգեցրել է համաձայնագիր չկնքելու հնարավորությանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 31.05.2022թ.-ի թիվ 26/26-1/9976-2022 գրությամբ «Պրո-Մեդ Պլուս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2022/260 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Պրո-Մեդ Պլուս» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**